

ցույց տվեց, որ նոյնիսկ գերտերությունները չեն կարող դիմակայել գլորալ տնտեսության հարձակմանը, իսկ երիտասարդ պետությունները, որոնց գերակշռող մասը մինչև վերջերս զաղութներ էին, սահմանափակ հնարավորությունների պատճառով էլ ավելի խոցելի են: Նոյնիսկ կապիտալիստական աշխարհում մի շարք շատ հարուստ երկրներ, ինչպիսիք են Գերմանիան և Շվայցարիան, կարելի է դիտարկել որպես կիսով չափ ինքնիշխան:

Գլորալացումը, ինչպես էլ այն գնահատես, իրենից ներկայացնում է ժամանակակից գոյության փաստը:

Գլորալացման գաղափարը բազմադեմ և բազմակողմանի է: Նրա արժեքը գիտության համար այն է, որ կենտրոնացնում է ուշադրությունը այն գործընթացների վրա, որոնք աշխարհը վեր են ածում մի միանալիք ամբողջության՝ գլորալ համակարգի: Այսինքն, արդի գործընթացների արդյունքում համաշխարհային զարգացումը զուտ տնտեսական ինտեգրման համակարգից վերածել է ներիդուսումների մի բարդ համակարգի, ունիվերսալ արժեքների որոշակի մեխանիզմներով, շուկաների և ֆինանսական հարաբերությունների ու մշակութային կապերի փոխազդեցությամբ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԵՐՁՅԱՆ

ՀՀ ԳԱՍՏ Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.

ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍՏ Մ. Քորանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐՈՎ (ADAPTIVE EXPRACTATIONS) ԷԿՈՆՈՄԵՏՐԻԿ ՍՈՂԵԼՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՀ ԻՐԱԿԱՆ ՀՆԱ-Ի ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Ներդրումները ունենում են իրենց ուրույն նշանակությունը պետության զարգացման գործում՝ ազդելով երկրի սոցիալ-տնտեսական ցուցանիշների վրա: Ներդրումները համարվում են ՀՆԱ-ի ամենավլույշտում, համեմատած մյուս 3 բաղադրիչների հետ, տարրը: Այդ փոփոխականությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով: Ներդրումները անել-չանելու որոշման վրա բացի տնտեսական գործոններից՝ սղաճ, գործազրկություն, տնտեսական աճ և այլն, ազդում են նաև սոցիալ-քաղաքական գործոններ՝ բնակչության թիվ, հանցագործության մակարդակ, կոռուպցիա և այլն: Այս պայմաններում հատկապես մասնավոր ներդրումների ներհոսք ապահովելը դառնում է բարդագույն գործ: Սակայն, ժամանակակից պետության հիմնական ֆունկցիաներից մեկը համարվում է ներդրումային միջոցների ներգրավման համար համապատասխան միջավայրի ստեղծումը՝ ինչպես տնտեսական, այնպես էլ այլ խելամիտ գործիքների կիրառմամբ: Ներդրումային միջավայրի բազմակողմ ուսումնասիրությունը հիմք է հանդիսանում նպատակառողկած տնտեսական բաղաքականության իրականացման համար, որի հիմնական նպատակը պետք է լինի տնտեսության հետագա աճը ապահովող ներդրումային անհրաժեշտ միջոցների ներգրավումը: Վերջիններս հնարավորություն են տալիս իրականացնել կամ առաջ տանել ծրագրեր, որոնք իրենց հերթին ներկայիս և հետագա սերունդների բարեկեցիկ ապագան ապահովելու մեծ պոտենցիալ ունեն նոյնիսկ տասնամյակներ հետո: Ներդրումային միջոցների օգնությամբ ստեղծվում է բարենպաստ սոցիալական միջավայր, որը ցանկացած սոցիալական ուղղվածությամբ երկրի կարևորագույն խնդիրներից է:

ՀՀ-ում ներդրումային միջավայրը բավականին զգայուն է: Այդ զգայունությունը նախ և առաջ կապված է արտաքին խնդիրներով՝ հակամարտության առկայություն, ոչ բարեկամական երկրներով շրջապատվածություն, տնտեսական բազմաթիվ արգելվներ, փոքր տարածք և այլն: Հաջորդ խնդիրը կապված է ներքին իրավիճակով՝ բաղաքական անկայուն վիճակ,

փոքր շուկա, կոռուպցիա, ոչ մրցունակ տնտեսություն, «խաղի կանոնների» ոչ հստակ ձևակերպումներ, վերջին ժամանակներում նաև ավելացել է ֆինանսատնտեսական ճգնաժամը, որն էլ ավելի հետ մղեց երկրի զարգացումը: Սակայն, այս բացասական կողմերին զուգահեռ ունենք զարգացած բանկային համակարգ, որը բավականին մրցունակ է: Վերջինս տնտեսության իրական հատված ներդրումային հոսքերի ավելի արագ տեղափոխման կարևոր օլոք է հանդիսանում: Այստեղ էական նշանակություն է ստանում նաև բանկային ռիսկերի կառավարման մոդելավորման հիմնախնդիրների դիտարկումը, որը իրական հատված, բանկային համակարգ և ներդրումներ կապը դարձնում է կառավարելի և հիմնավորված: Իրական հատված ներդրումային միջոցների տեղափոխման արդյունավետությունը ընդունելու նպատակով սույն աշխատանքում առաջարկվում է ուսումնասիրել հարմարվողական սպասումների էկոնոմետրիկ մոդել¹, որի միջոցով հնարավոր կլինի պարզել.

- իրական ՀՆԱ-ի վրա տնտեսվարողների կողմից սպասվելիք հաջորդ ժամանակահատվածի իրական ներդրումների ծավալի ազդեցությունը,

- տնտեսվարող սուբյեկտների սպասումների գործակցի չափը:

Վերը նշված կետերի պատասխանները գտնելու նպատակով դիտարկենք հետևյալ ոչ գծային էկոնոմետրիկ մոդելը.

$$RGDP_t = \alpha \cdot R\bar{INV}_{t+1}^{\beta} \cdot \varepsilon_t \quad (1)$$

որտեղ

$RGDP_t$ - ն փաստացի իրական ՀՆԱ-ն է t - րդ եռամսյակում,

$R\bar{INV}_{t+1}$ - ը t -րդ եռամսյակում՝ տնտեսվարողների կողմից սպասվելիք հաջորդ՝ $t+1$ -րդ եռամսյակի իրական ներդրումների ծավալն է,

ε_t - օ մոդելի սխալն է:

(1) Էկոնոմետրիկ մոդելը, որը դիտարկվում է 2005թ. առաջին եռամսյակից մինչև 2010թ. շրբորդ եռամսյակն ընկած ժամանակահատվածում², զնահատելու համար անհրաժեշտ է ունենալ տնտեսվարողների կողմից սպասվելիք ներդրումների ծավալի վիճակագրական ցուցանիշները, որոնք գործնականում բարդ են զնահատել: Առաջարկենք մոդելի զնահատման մի մերոդ, որի օգնությամբ հնարավոր կլինի շրջանցել նշված դժվարությունը: Հարմարվողական սպասումների (adaptive expectations) պարագայում անընդհատ տեղի է ունենում տնտեսվարողների սպասումների ճշգրտում, որը կատարվում է հիմնվելով ներդրումների և ՀՆԱ-ի փաստացի վիճակագրության վրա: Եթե տվյալ ցուցանիշի (մեր դեպքում իրական ներդրումների) փաստացի արժեքը ավել է եղել սպասվածից, ապա հաջորդ ժամանակահատվածում սպասվող ներդրումները ուղղվում են դեպի ավելացման կողմը և հակառակը: Տնտեսվարողների սպասումների ճշգրտման գործակցի մեծությունը պետք է համապատասխանի փաստացի և սպասվող ներդրումների մեծությունների տարբերությանը: Հարմարվողական սպասումների մոտեցումը կարելի է նկարագրել հետևյալ արտահայտության օգնությամբ.

$$(lnR\bar{INV}_{t+1} - lnR\bar{INV}_t) = (1 - \varphi)(lnR\bar{INV}_t - lnR\bar{INV}_t), 0 \leq \varphi < 1 \quad (2)$$

որտեղ՝

$lnR\bar{INV}_t$ - ն փաստացի իրական ներդրումների ծավալներն են t -րդ եռամսյակում լոգարիթմված վիճակում,

$lnR\bar{INV}_t$ - ը $t-1$ -րդ եռամսյակում՝ տնտեսվարողների կողմից սպասվելիք հաջորդ՝ t -րդ եռամսյակի իրական ներդրումների ծավալն է լոգարիթմված վիճակում,

$lnR\bar{INV}_{t+1}$ - ը t -րդ եռամսյակում՝ տնտեսվարողների կողմից սպասվելիք հաջորդ՝ $t+1$ -րդ եռամսյակի իրական ներդրումների ծավալն է լոգարիթմված վիճակում,

φ - ն տնտեսվարողների սպասումների ճշգրտման գործակցն է:

(2) արտահայտությունից կունենանք՝

$$lnR\bar{INV}_{t+1} = \varphi lnR\bar{INV}_t + (1 - \varphi)lnR\bar{INV}_t \quad (3)$$

(3) բանաձևը ունի տնտեսագիտական էական իմաստ. տնտեսվարողների կողմից սպասվելիք հաջորդ՝ $t+1$ -րդ եռամսյակի իրական ներդրումների ծավալի մեծությունը հանդի-

¹ Я.Р.Магнус, П.К. Катышев, А.А. Пересецкий, Эконометрика, издательство ‘Дело’, Москва 2004, ст. 266-275.

² ՀՀ ԿԲ 2005-2010թթ. եռամսյակային տվյալներ, <http://www.cba.am/>.

սանում է տվյալ պահի փաստացի և $t-1$ -րդ եռամսյակում՝ տնտեսվարողների կողմից սպասվելիք հաջորդ՝ t -րդ եռամսյակի իրական ներդրումների ծավալների կշռված միջինը:

Ներկայացնելով (1) մոդելը գծայնացված վիճակում, որին կարելի է անվանել հարմարվողական սպասումներով մոդել՝

$$\ln RGDP_t = \alpha + \beta \ln RINV_{t+1} + \ln \varepsilon_t \quad (4)$$

որտեղ՝

$\ln RGDP_t$ -ն փաստացի իրական ՀՆԱ-ն է t -րդ եռամսյակում լոգարիթմված վիճակում,

$\alpha = \ln \alpha$ -ն մոդելի անհայտ պարամետրն է,

$\ln \varepsilon_t$ -ն մոդելի սխալն է լոգարիթմված վիճակում:

Այնուհետև համադրելով (4) էկոնոմետրիկ մոդելը (3) արտահայտության հետ և իրականացնելով պարզագույն մաթեմատիկական գործողություններ՝ կունենանք.

$$\ln RGDP_t = \alpha + \beta \varphi \ln RINV_t + \beta (1 - \varphi) \ln RINV_{t-1} + \ln \varepsilon_t \quad (5)$$

Ստացված մոդելից հանելով $\ln RGDP_{t-1}$ -ի համար գրված (5) մոդելը, բազմապատկված $(1 - \varphi)$ գործակցով՝ կստանանք զնահատման համար անհրաժեշտ հետևյալ ավորեցնելուն էկոնոմետրիկ մոդելը.

$$\ln RGDP_t = \alpha \varphi + \beta \varphi \ln RINV_t + (1 - \varphi) \ln RGDP_{t-1} + \gamma_t \quad (6)$$

որտեղ՝

$\gamma_t = \ln \varepsilon_t - (1 - \varphi) \ln \varepsilon_{t-1}$ – ն ձևավորված էկոնոմետրիկ մոդելի սխալն է:

(6) մոդելը փոքրագույն քառակուսիների եղանակով¹ զնահատելուց հետո կստանանք հետևյալ արդյունքները.

$$\widehat{\ln RGDP}_t = 10.44 + 0.39 \ln RINV_t + 0.11 \ln RGDP_{t-1} \quad (7)$$

(7) մոդելը լավ որակի է. դրա մասին են վկայում դետերմինացիայի գործակցի արժեքը՝ 0.98, ստացված գործակիցների ստանդարտ սխալների փոքր արժեքները՝ համապատասխանաբար 0.642, 0.011, 0.028, բոլոր գործակիցների գրությունների մոտ արժեքը:

(7) մոդելի օգնությամբ կարելի է տալ հետևյալ համակարգը.

$$\begin{cases} \alpha \varphi = 10.44 \\ \beta \varphi = 0.39 \\ (1 - \varphi) = 0.11 \end{cases} \quad (8)$$

Լուծելով գործակիցների (8) համակարգը կունենանք անհայտ պարամետրերի հետևյալ վերջնական զնահատականները.

$$\begin{cases} \alpha = \ln \alpha = 11.7 \\ \beta = 0.43 \\ \varphi = 0.89 \end{cases} \quad (9)$$

Օգտագործելով (9) համակարգում ստացված արդյունքները՝ կստանանք վերջնական զնահատված մոդելը.

$$\widehat{\ln RGDP}_t = 11.7 + 0.43 \ln RINV_{t+1} \quad (10)$$

որտեղ՝

$\widehat{\ln RGDP}_t$ – ն t – րդ եռամսյակում իրական ՀՆԱ-ի ծավալի կանխատեսվող (զնահատված) մեծությունն է լոգարիթմված վիճակում:

(10) մոդելի օգնությամբ հմարավոր է պատասխանել մերկայացված աշխատանքի սկզբունքի հիշատակված հարցերին.

1. Ստացված արդյունքներից կարելի է եզրակացնել, որ սպասումների գործակցի՝ $\varphi = 0.89$, արժեքը նշան է այն բանի, որ տնտեսվարողների սպասումները մեծ հավանականությամբ իրատեսական են:
2. Տնտեսվարողների կողմից սպասվելիք հաջորդ ժամանակահատվածի իրական ներդրումների ծավալը ($\ln RINV_{t+1}$) 1%-ով ավելացնելիս իրական ՀՆԱ-ի ծավալները աճում են 43%-ով:
3. Ազատ անդամի մեծությունը ($\alpha = \ln \alpha = 11.7$) ցույց է տալիս իրական ՀՆԱ - ի ծավալը,

¹ Я.Р.Магнус, П.К. Катышев, А.А. Пересецкий, Эконометрика, издательство “Дело”, Москва 2004, ст. 69-71.

որը ստացվում է հաջորդ ժամանակահատվածի սպասվելիք իրական ներդրումներից անկախ:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտության ֆինանսավորման հիմնախնդիրները շատ մեծ կարևորություն ունեն գիտական հետազոտությունների և տնտեսության զարգացման գործում, ահա թե ինչու դրանք գտնվում են բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Դեռևս 1997թ.-ին Էտզկովիչ (Etzkowitz) կողմից առաջարկվեց Եռակի պարույրի մոդելը (Triple Helix model), որի հիմնական գաղափարախոսությունը կառուցվում էր ակադեմիա-պետություն-գործարար հատվածների եռակողմ և բազմաֆունկցիոնալ փոխհամագործակցության վրա: Հետազայում այս մոդելը զարգացվեց Լեյնեսդորֆի կողմից (Jones-Evans, 1997, Leydesdorff, 1996, 1997), որտեղ գծային զարգացման փոխարեն առաջարկվեց պարույրի տեսք ունեցող զարգացման գաղափարը: Այս նորամուծական մոդելի միջոցով ապահովում էր երեք ինստիտուցիոնալ միավորների՝ մասնավոր, պետական հատվածների և ակադեմիական համակարգի համագործակցությունը՝ գիտելիքի կապիտալացման տարրեր փուլերում:

- Նորամուծությունների խթանման և համագործակցության ցանցերի ընդլայնման միջոցով:
- Շատ երկրներում գործում է Triple Helix model¹-ը, որը հայտնի եվրոպական երկրների գիտության զարգացման և արդյունաբերական ձեռնարկությունների հետ կապի մոդելն է:
- Եվ, վերջապես, համալսարանները դիտարկվում են որպես տնտեսական ներուժ կրողներ, հատկապես այն առումով, որ պատրաստում են այնպիսի կադրեր, ովքեր կարող են գործել գիտելիքահենք ուղղվածություն ունեցող հասարակության մեջ:

Աղյուսակ 1

**Գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների
քանակը, աշխատանքների ծավալը և աշխատողների թվաքանակն ըստ
նախարարությունների և գերատեսչությունների, 2010թ.²**

ИРИНА АКОПЯН

*Старший научный сотрудник Института
экономики им. М.Котаняна НАН РА, к.э.н.*

**ВЗАИМОСВЯЗЬ АМОРТИЗАЦИОННОЙ И НАЛОГОВОЙ ПОЛИТИКИ
В ПОСТСОЦИАЛИСТИЧЕСКИХ СТРАНАХ**

Процесс реформирования налогового законодательства, протекающий с девяностых годов прошлого века в постсоциалистических странах, охватил также совершенствование амортизационной политики в налоговых целях. Дело в том, что в условиях развития рыночных отношений амортизационные отчисления утратили свою основную (воспроизводственную) функцию, которую они выполняли в условиях социалистической системы хозяйствования. При этом одной из причин ослабления воспроизводственной функции явилась продолжающаяся инфляция.

¹ www.fondazionerosselli.it/DocumentFolder/Helix.doc

² Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ., հունվար-հուլիսին, էջ 184: